

36 ՍՏՐԱՏԱԳԵՄԱՆԵՐ

«Ստրատագեմ» տերմինը հին հունական «strategema» բառից է սերում, որը նշանակում է ռազմական գործ ընդհանրապես և ռազմական խորամանկություն մասնավորապես: Սա նշանակում է ռազմավարական պլան, որում հակառակորդի համար կա՛մ ինչ-որ թակարդ է թաքնված, կա՛մ խորամանկություն: Ուստի «ստրատագեմություն» տերմինն իր մեջ ներառում է բավականին բազմազան և նույնիսկ հակասական ձգտումների մի ամբողջ փունջ՝ քողարկություն, մոլորության մեջ գցել, գայթակղություն և փախուստ, առավելությունների ստացում, ավարի հափշտակում:

Ստրատագեմական մտածողությունը մարտարվեստի անբաժանելի մաս է:

Ստրատագեմաների կազմման և հաջող իրականացման անհրաժեշտ պայմանները հետևյալն են՝ կարողանալ հաշվարկել քայլերը և կանխատեսել դրանց հետևանքները, գիտենալ նրանց հոգեբանական առանձնահատկությունները, ում դեմ է ուղղված ծրագիրը և ստրատագեման իրականացնելու համար ծրագրի հեղինակի համառությունը:

Ներկայացնենք 36 ստրատագեմները և նրանց մեկնաբանությունները.

1. Խաբել կայսերը, որպեսզի նա լողալով անցնի ծովը: *Նպատակը թաքցնել:*

2. Պաշարել Վեյը՝ Չժաոն փրկելու համար: *Անուղղակի ճնշում թշնամու վրա՝ սպառնալիքն ուղղելով նրա խոցելի տեղերից մեկին: Թույլ տեղին հարված հասցնելու ստրատագեմա:*

3. Սպանել ուրիշի դանակով: *Թշնամուն կործանել ուրիշի ձեռքերով: Անուղղակիորեն վնաս հասցնել՝ առանց երևալու:*

4. Հանգիստ (առանց որևէ բան անելու) սպասել հոգնած թշնամուն: *Հակառակորդին ուժասպառ անելու ստրատագեմա:*

5. Կողոպտել հրդեհի ժամանակ: *Օգուտ քաղել ուրիշի կարիքից, դժվարություններից, հարձակվել քաոսային վիճակի հասցված հակառակորդի վրա:*

6. Աղմուկ բարձրացնել արևելքում, հարձակվել արևմուտքում: *Խաբող զորաշարժ անցկացնել՝ հարձակման իսկական ուղղությունը թաքցնելու համար:*

7. Ոչնչից ինչ-որ բան ստանալ: *Այս ստրատագեմը կարող է աշխատել երեք տարբեր ուղղություններով.*
ա) Հարկավոր է սպառնալիքն այնպես ներկայացնել, որ հակառակորդը նկատի խաբեությունը: Այդ ժամանակ նրա արթմնիությունը կթուլանա, և իսկական սպառնալիքի ժամանակ նա այն նույնպես կեղծի տեղ կդնի և արդյունքում կզոհվի:
բ) Շահել առավելության միջոցով, մտածելակերպում փոփոխության հասնել ձևացնելու, թատրոն խաղալու, կեղծիքի օգնությամբ:
գ) Օդից ինչ-որ բան վերցնել. հնարանքը ներկայացնել որպես իրականություն. բամբասանք տարածել. սուտ, զրպարտչական «կամպանիաներ» կազմակերպել: Լվից ուղտ սարքել:

8. Փայտե կամրջակներ պատրաստել, որ բոլորը տեսնեն, իսկ գաղտնի կերպով մտնել Չըն-ցան: *Թաքցնել իրական ուղղությունը: Թաքցնել իրական մտադրությունը սովորական գործողությունների տակ:*

9. Սարի վրա նստած հետևել վագրերի կռվին, կամ՝ Կրակին նայել հակառակ ափից: *Իրր անտարբերությամբ հետևել նրան, թե ինչպես է թշնամին հայտնվել ճգնաժամային իրավիճակում, ծանր վիճակում: Անգործություն, ոչ մի օգնություն, ոչ մի շտապ միջամտություն կամ ժամանակից շտապողականություն քանի դեռ իրավիճակը չի փոխվել քո օգտին, և միայն այդ ժամանակ կարելի է գործել և քաղել պտուղները:*

10. Ժպիտի ետևում դաշույն թաքցնել, կամ՝ Բերանում՝ մեղր, իսկ ծոցում՝ թուր: *Խոսքերով սիրաշահել, իսկ սրտում չարություն հասունացնել: Վատ մտադրությունները ծածկել արտաքին բարյացակամությամբ և գեղեցիկ խոսքերով:*

Երկերեսանիության, ուշադրությունը քնեցնելու, Հուդայի համբույրի ստրատագեմա:

11. Սալորենին չորանում է դեղձենու փոխարեն: Սալորենին իրեն զոհաբերում է կողքին աճող դեղձենու համար՝ իր արմատները միջատներին կեր տալով:
ա) Խորամանկ քայլի օգնությամբ ինքդ քեզ զոհաբերում ես մյուսին փրկելու համար:
բ) Խորամանկ քայլի օգնությամբ ուրիշին զոհաբերում ես ինքդ քեզ փրկելու համար:
գ) Խորամանկ քայլի օգնությամբ ուրիշին զոհաբերում ես երրորդին փրկելու համար:
դ) Քիչ բան զոհաբերելով՝ ստանալ ինչ-որ արժեքավոր բան:

12. Թեթև ձեռքով ոչխարին տանել: *Հնարամտորեն օգտագործելով հանգամանքները՝ կարողանալ հետդ տանել պատահաբար ձեռքի տակ հայտնված ոչխարին:*

13. Խփել խոտին՝ օձին վախեցնելու համար: *1957թ. Չինաստանը հայտարարում է խոսքի ազատություն՝ «Թող ծաղկեն 100 ծաղիկներ» կարգախոսով, ինչի շնորհիվ բացահայտվում են Կոմկուսի քաղաքականության հետ չհամաձայնվող մարդիկ (օձ), որոնք վերացվում են «մշակութային հեղափոխության» ժամանակ:*

14. Պարտքով դիակ փոխառնել/վերցնել՝ սեփական կյանքը վերադարձնելու համար:
ա) Նոր նպատակ դնելով՝ կյանքի կոչել անցյալին պատկանող ինչ-որ բան, օր՝. կոնֆուցիականությունը:
բ) Ժամանակակից գաղափարական պայքարում օգտագործել հին գաղափարները, ավանդույթները, սովորույթները, գեղարվեստական ստեղծագործությունները և այլն՝ դրանք վերամեկնաբանելով նորագույն կիրառման համար:
գ) Իրականում նոր բանին տալ հնի շունչ:
1947թ. Մաոն վերածնում և օգտագործում է Գոմինդանի առաջնորդ Սուն Յաթ Սենի կողմից մշակված Չինաստանի վերածնման սկզբունքները՝ դրանք լցնելով կոմունիստական բովանդակությամբ, ինչի շնորհիվ կարողանում է կուսակցության շարքերը ներգրավել մտավորականներին:

15. Ստիպել վագրին լքել սարը: Վագրին հրապուրել, որ իր սարից իջնի հարթավայր: *Հակառակորդին կտրել իր բազայից:*

16. Եթե ցանկանում ես ինչ-որ բան բռնել, նախ այն բաց թող: Ինչը որ ցանկանում ես հափշտակել, նախ թույլ տուր գնա: Խաբել ինչ-որ մեկին հենց նրա մտածելակերպի օգնությամբ:
3-րդ դարում Չինաստանը կռվում էր հարավային ժողովուրդների հետ: *Չինացի զորավարը 7 անգամ հաղթում է հարավային գեներալին և յոթ անգամն էլ նրան բաց է թողնում՝ սրանով առաջացնելով գեներալի համակրանքը: Դրա շնորհիվ այս տարածքները ենթարկվում են Չինաստանին առանց այնտեղ զորք պահելու անհրաժեշտության:*

17. Աղյուս գցել հասպիս (յաշմա) ստանալու համար: *Արժեք չունեցող ինչ-որ բան տալ՝ փոխարենը մի արժեքավոր բան կորզելու համար, աննշան նվերի կամ բարյացակամության օգնությամբ հասնել զգալի հաղթանակի: «Ագռավի ու աղվեսի», Տրոյական ձիու ստրատագեմա:*

18. Ավազակախումբը վնասազերծելու համար սկզբում հարկավոր է բռնել պարագլխին:

    Վնասազերծել հակառակորդի առաջնորդին կամ գլխավոր շտաբը, որպեսզի նրան ջախջախելու համար հետո ավելի քիչ ուժեր ծախսես; հակառակորդին անվնաս դարձնել՝ վերացնելով վերնախավին: *Առաջնորդին բռնելու, գլխին հարված հասցնելու, աքիլլեսյան գարշապարի ստրատագեմա: «Երբ ծառը կտրում են, կապիկները վրայից փախչում են», «Թելը քաշելով հանգույց ձգել», «Եթե օձին ես խփում, գլխին խփիր», «Եթե ցլին տանում ես, նրա քթի օղակից քաշիր»: Յուրաքանչյուր գործում հարկավոր է գլխավորից սկսել:*

19. Օջախի տակից ցախը հանիր: *Թշնամու ուժին բացեիբաց մի դիմակայիր, բայց աստիճանաբար թուլացրու նրա հիմքը:*

20. Պղտոր ջրում ձուկ որսալ: *Օգտվել թշնամու ճամբարում եղած թաքուն անհամաձայնություններից, նրա թուլությունից և մշտականության (հաստատունության) բացակայությունից:*

21. Ոսկյա ճպուռը գցում է իր թեփուկները: *Միշտ պահպանի՛ր վստահելի տեսք: Քո դիրքում, տեսքում թերություններ թույլ մի տուր: Այդպես կարելի է դաշնակցին վախերից ազատել և հակառակորդին թույլ չտալ հարձակում նախաձեռնել:*

22. Կողպել դարպասները՝ գողին բռնելու համար: *Եթե հակառակորդը փոքրաթիվ է, տեղում նրան շրջապատիր և ոչնչացրու:*

23. Հեռուն գտնվողի հետ բարեկամություն անել, մոտիկում գտնվողի վրա հարձակվել:

    Մ.թ.ա. 3-րդ դ. Ցին Շիխուան կայսրը աստիճանաբար ընդլայնում է իր տարածքները մոտ հարևանների հաշվին, հասնում հեռավորների չեզոքությանը՝ դրա շնորհիվ մ.թ.ա. 221 թ. միավորելով ողջ Չինաստանը մեկ միասնական պետության մեջ:

24. Անցում պահանջել Գոյի միջով՝ նրա վրա հարձակվելու համար: *Թույլը սեղմված է երկու ուժեղ թշնամիների միջև: Հակառակորդը սպառնում է նրան իրեն ենթարկել:*

25. Գողանալ հեծանը և թաքուն փոխել սյուները առանց տները տեղաշարժելու: *Դաշնակցին ստիպել անընդհատ փոխել իր զորաշարվածքը: Օգտվել նրա շարքերում անկարգությունից՝ նրա ուժերը ջլատելու համար:*

26. Թաքցնել ակացիան և ցույց տալ թթի ծառը: *Թաքցնել իրական մեղավորներին, իրադարձությունների իրական պատճառները՝ ցույց տալով դրածո կամ հնարովի անձանց:*

27. Հիմարի դեր խաղալ, առանց խելքը կորցնելու: *Լավ է ձև անել, թե ոչինչ չգիտես և չես ցանկանում ոչինչ անել, քան ցույց տալ, որ գիտելիք ունես և անխոհեմ գործես:*

28. Բարձրացնել տանիք և հեռացնել սանդուղքը: Խաբել սեփական զինվորներին՝ խոստանալով նրանց հեշտ հաղթանակ: Նրանց առաջ հրել՝ կտրելով նահանջի ճանապարհները և նրանց դարձնելով մահվան գերիները: Կենաց ու մահու կռվի պատրաստ զորքը ավելի շուտ կենդանի կմնա, քան կենդանի մնալ ցանկացող զորքը:

Գովազդների օրինակը. գնորդին իրենց ակցիաներով, առաջարկներով ու նվերներով այնպիսի իրավիճակի մեջ են դնում, որ նա ստիպված գնում է այդ իրը:

29. Չոր ծառի վրա ծաղիկներ կախել: *Դաշնակցի մի քանի ջոկատներ քո կողմը գրավել. ոչ այնքան մեծ ուժը կարող է մեծ արդյունքի հանգեցնել:*

30. Հյուրին նստեցնել տանտիրոջ տեղում: *Շոշափել մուտքը և շարժվել առաջ, քանի դեռ չես հասել գերիշխող դիրքի:*

31. «Գեղեցկուհի» ստրատագեմա: Եթե զորքը հզոր է, հարձակվի՛ր նրա հրամանատարի վրա: Եթե հրամանատարն իմաստուն է, ազդի՛ր նրա զգացմունքների վրա: *Հնարավոր տարբերակներից մեկն է՝ ուղարկի՛ր նրա մոտ մի գեղեցիկ կնոջ: Կամ էլ օգտագործիր այն կնոջը, ով նրա վրա ազդեցություն ունի:*

32. Բացված քաղաքային դարպասների ստրատագեմա: Ներկայացնել սուտը՝ որպես իրականություն, իսկ իրականությունը՝ որպես սուտ: Ստիպել հակառակորդին տեսնել թակարդ այնտեղ, որտեղ այն իրականում չկա:

Մ.թ.ա. 3-րդ դարի դրվագ: Հան դինաստիայի Շու Հան զորավարը իր 2500 զինվորներով գտնվում էր մի փոքրիկ քաղաքում և իմանում է, որ հարձակվում է պատրաստվում իրենց վրա 250 հազարանոց զորքի կողմից: Այդ ժամանակ նա հրամայում է բացել քաղաքի դարպասները, պատերի վրայից հեռացնել պահակներին, իսկ իր համար էլ մի ճաշի սեղան գցել ամենաերևացող տեղում: Այս ամենը տեսնելով՝ հակառակորդի գեներալը, չհավատալով քաղաքի դատարկությանը, որոշում է շատ զգույշ և դանդաղ գործել, ինչն էլ անհրաժեշտ էր Շու Հանի ջոկատին նահանջելու համար:

33. Երկպառակություն սերմանելու ստրատագեմա: *«Բաժանիր, որ տիրես»: Օգնելով մեկին մյուսի դեմ պայքարում՝ դու նրան քեզանից կախման մեջ ես պահում:*

34. Ինքն իրեն միտումնավոր վերք հասցնելու ստրատագեմա: Երբեք ոչ ոք չի ցանկանում ինքն իրեն վերք հասցնել: *Եթե մեկն ինքն իրեն վիրավորել է, ապա այստեղ խարդախություն չկա: Եթե սուտն այնքան ճշմարիտ է թվում, որ ճշմարտությունը սուտ է թվում, ուրեմն խորամանկությունը հաջողվել է:*

35. Շղթայի ստրատագեմա: Եթե հակառակորդի զորքը չափազանց մեծաքանակ է, և բացեիբաց նրան հակազդելն անհնարին է, ապա հարկավոր է ստիպել նրան ինքն իրեն կապել և այդ ձևով ոչնչացնել նրա ուժերը: *Հասնել նրան, որ հակառակորդն ինչ-որ ձևով ինքն իրեն կաշկանդի և խոցելի դառնա հարձակման համար:*

36. Փախուստը (լրիվ անհուսալիության պարագայում) ամենալավ ստրատագեման է:

Որպես 36-ի օրինակ կարող է ծառայել չինական բանակի «Երկար արշավը» (1934-1936 թթ.): Գոմինդանի հարվածների տակ նահանջելով և մեծ կորուստներ կրելով (86000-ից վերջում մնացել էր 4000)՝ չին կոմունիստները անցան ավելի քան 10000 կմ, հատեցին 34 գետ, 18 լեռնազանգված, 11 նահանգ և հասան իրենց նպատակին՝ խուսափելով վերջնական ոչնչացումից: Չինաստանում սա լայնորեն տարածված արտահայտություն է՝ «պարտություն չկրելը արդեն նշանակում է հաղթել»:

Աղբյուրը: 36 ստրատագեմները Չինաստանի քաղաքականության մեջ